Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար դատական ավտոմատացված համակարգի սպասարկման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/6-03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» դեկտեմբերի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝
Արմեն Ասլանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Գայանե Քոչարյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝
Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/6-03» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի դեկտեմբերի 16-ին, ժամը 12:00-ին:

2. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22, Հեռ. (010)209100,(093)435557

3. Համակարգում 07.12.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

4. Տվյալներ՝ բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տվյալներ՝ մասնակիցների ներկայացրած հայտերի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. վերջինս գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Մասնակցի առաջարկած գինը՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումարը
1	«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	18 000 000	1 291 666.7	19 291 666.7	3 858 333.3	23 150 000

7. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.
Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ին:

8. Հանձնաժողովի քարտուղարին.
Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը
1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Մարգիս Արմենակյան

Անդամներ՝

Արմեն Ասլանյան

Արման Հարությունյան

Արթուր Թամրազյան

Գայանե Քոչարյան

Քարտուղար՝

Դավիթ Թովմասյան